

## Հայտարարություն

Վայոց ձորի մարզի Խաչիկի միջն. դպրոց ՊՈԱԿ տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության կարգի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերի համաձայն՝ Վայոց ձորի մարզի Խաչիկի միջն. դպրոց ՊՈԱԿ կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.

2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են Խաչիկի միջնակարգ դպրոցում

2022 թվականի հունվարի 10-ից մինչև հունվարի 31 -ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9<sup>00</sup> -ից մինչև ժամը 15<sup>00</sup>-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022 թվականի փետրվարի 14 -ին՝ ժամը 14<sup>00</sup>-ին, Վայոց ձորի մարզի Խաչիկի միջն. դպրոց ՊՈԱԿ 18փ.շ1

Տեղեկությունների համար դիմել հեռախոս՝ 093283698 ,Արենի համայնք, բն.Խաչիկ 18 փող. շենք 1, էլփոստ՝ khachik@schools.am